Ճապոնիայի կառավարության դրամական աջակցությամբ Հայաստանում տարեկան 2000 օրթեզ է պատրաստվում

Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված մոտ 120 հազար եվրո դրամաշնորհի միջոցով Հայաստանի Հանրապետությունում պատրաստվում է տարեկան մոտ 2000 օրթեզ:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ «Օրթեզ» կենտրոնի և Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան միջև դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է 4 տարի առաջ:

Կենտրոնի տնօրեն Արա Թեքյոզյանի խոսքով՝ ստորագրված պայմանագրի շնորհիվ իրենք մեծ տեխնիկական օգնություն են ստացել:

«Մենք ստացել ենք հատուկ գործիքներ, որոնց միջոցով պատրաստվում են օրթեզները: Այդ մասնագիտական գործիքները շատ թանկ են՝ մոտ 120 հազար եվրո արժողությամբ նյութական օգնություն էր: Այդ սարքավորման միջոցով տարեկան պատրաստում ենք մոտ 2000 օրթեզ»,- նշեց Թեքյոզյանը:

Նա ընդգծեց, որ այս 4 տարում բազմաթիվ հենաշարժողական խնդիր ունեցող երեխաների համար օրթեզավորման կենտրոնում մեծ քանակությամբ օրթեզ է պատրաստվել:

Օրթեզներն օգնում են շտկել հիվանդի վերջույթների կամ մարմնի այլ մասերի դեֆորմացիան՝ տեղաշարժվելու կամ որոշակի աշխատանք անելու համար:

1
11:18 15/03/2018

Lragir.am Նորությունների կայքից.
http://www.lragir.am/index/arm/0/society/view/171991